


891.99
LX - 81



29-52/
44 44
12/13 48095
12/13 48095

12

891.99

Q-81

0
-48

ՎԻՇԱՊԱՄԱՅՐ

այ

1001
984



Տպարան „ՇիբՈՒ“ Արքայական
Ուժի

19 NOV 2010 01 JAN 2009
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴՐԱՄԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈԵԴԻԿԱՆ ԲԻBLIOGRAPHICA
7/II. 1922
* Հ. ԱՅԱՍՏԻԿԱՆԻ ԱՆԴՐԱ
ԵՎՀԵԱ, ԽԱԾՈՒՅԱՆ

ԱՏՐԴԵՏ

21 FEB 2013

27226

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Վիշապների մասին մեր ժողովրդի մէջ եղած աւանդութիւններն այնքան բաղմագան են, որ ամեն մի գաւառում կարելի է տարրեր պատմութիւններ և առասպելներ լսել: Շատ մանուկ հասակից այս մասին լսածո նկարագրութիւններն այնպիսի խոր տպաւորութիւն էին թողել, որ սրանից ուսաը տարի առաջ գրելու հրատարակել եմ «Վիշապը», «Վիշապի Առագաստը» և ուրիշ լէպէնդաներ:


Անձերքելի է, որ Հայաստանում ամենավազ ժամանակներից գոյութիւն է ունեցել ջրապաշտութիւնը: Ինչպէս նեղոսը եզիպտացիների, Գանգէսը՝ Հնդիկների, Եփրատը՝ Քաղցէացիների պաշտաման առարկայ է դարձել, այնպէս էլ Հայկական գետերը (խալդական «Նէրի» կամ «Նայրի») լճակները, աւազանները պաշտամունքի առարկայ են եղել այն Խալդերի համար, որոնք վաղ ժամանակներից բնակութիւն էին հաստատել Նէրիների րդիսած բարձունքներում (Ուրարտայում):

Վանի ջրանցքները, Տոսպի արհեստական լճակները, Կապիւր (Շիրակում) արհեստական աւազանը, Մասիսի, Աբագումի, Զարիշատի և ուրիշ լեռների բարձունքներից սկսուծ և մինչև դաշտերը տարածւած առուները, մանաւանդ Մուղանի գաշտի մեծամեծ ջրանցքները ապացուցանում են, թէ ինչ մեծ խնամք են ունեցել Խալդերը երկրի սոսովման զործում: Զրի ստեղծագործութեան, արարշաւործութեան, մաքրութեան և սրբութեան մտուն եղած աւանդութիւնները այնքան խոր արմատներ են թողել ժողովրդի սրան խորքերում, որ քառասուն զար սնցնելուց և այնքան կրօնական վիրանորոգութիւններ կատարելուց յետոյ, այսօր դարձեալ անզգայաբար կրկնում են:

Ժողովրդի մէջ կենդանի մնացած աւանդութիւնները, զբականութեան մէջ լիւռապալանից մասին եղած հատ ու կտոր ակ-

նարկութիւնները, վիշտապի, ջրմօր, ջրճարսի, Յուշկապարփիների,
Փէրիների, Այծքաղի, Վիշտապարփիների, Ալքերի, մանաւանդ վար-
դեհերի, Ուկիամօր և Տիւրի մասին եղած հէքիաթներն ու առաս-
պելները ցոյց են տալիս, թէ ինչ խոր արմատներ է ունեցել ջրա-
պաշտութիւնը մեր երկրում:

Այս բոլորը, մանաւանդ անցեալ տարի վիշտապազանց բար-
ձունքում պրօֆ. Մարբի գտած վիշտապների որձաքարէ արձաննե-
րը և նրանց Խալդէական ծագումը, ինձ ստիպեցին վաղուց ի վեր
ուսումնասիրածու այս երկը զրի առնել առասպելական ձեռվ և մեր
պատանեկան աշխարհի ընթերցանութեան նիւթ՝ մատակարարել՝
մեր երկրի Խալդական շրջանի ջրապաշտական գիցարանական
աշխարհայիացքի մասին:



ՎԻՇՏԱՊԱՐՔԱՅՐ

Ամառան ջերմ ու պայծառ օր էր:

Կէսօրւան արեգակի ջերմ ճառագայթների խիստ տո-
թի ներգործութիւնից գալարւել, սմբել էր կենդանու-
թիւնն ու բուսականութիւնը: Մարդիկ քաշւել էին սա-
զարթախիտ ծառերի, շաքների տակ, կամ մտել էին
ներքնատաները զովանալու և հանգստանալու: Կենդանինե-
րը, թռչունները, նոյն իսկ միջատներն ու մժղուկները
պատսպարւել էին տերեների, քարերի տակ, ապառաժի
ճեղքերում, խոյս էին տւել կիզիչ արեի խանձող ճառա-
գայթներից: Ծառերի տերեները, պարտիզի ծաղիկներն
ու բանջարները, բամբակի թփերը, նոյն իսկ բընձի մար-
կի մէջ ճոճւող եղէգները թռռումել, թորմշել էին: Գոմէշ-
ները մտել էին գետերի, լճակների կամ ճահճների ջրե-
րը, տարածւել, հովանում էին: Գետինը սոսկալի տոթից
տեղ-տեղ ճաքճքել էր, ծառերի արմատները դուրս էին
թափւել, չորացել ու ճեղճղւել էին:

Տոթից հառաջող ամեն մի շրթունք աչքերը երկինք յառած մրմնջում էր.

— Այս, գլխառատ Տէր, մի քանի կաթիլ անձրե շնորհիր, ողորմիր ու աշխարհ զովացրու:

Նոյն իսկ անասունները բառաչելով, կարծես երկնքից թոն ու թաթաւ էին աղերսում: Թոռոմած բոյսերի ցըմքած թուլացած կատարները վար էին կախւել, անձրեի սպասում:

Այս խեղդող տոթին Արարատեան դաշտում, Դւին քաղաքի արևելքում տարածւած բլրակ աւանում մի մեծ ապարանքի շւաքում սպասաւորները ճանապարհորդական պատրաստութեամբ էին զբաղւած: Յատկապէս կանչւած վարպետները կարգի էին գցում ջորիների համետները, եզների ջւալները, ուղտերի վզնոցները, զանգակները, բոժոժները, ձիերի սանձերն ու թամքերը: Մի կողմը ջորիների, մատեանների սմբակներն էին տաշում ու պայտում, միւս կողմը պայուսակներն ու պարկերը մաքրում, մաղախները կարգատում: Բակում հիւսները պատգարակներն էին վերանորոգում, ներկում, զարդարում:


Վարպետների պահանջած իրերի մատակարարներն ու մառանապետները մեծ հազելպով նրանց հասցնում էին: Թէև օդը շնչահեղձ դարձնելու աստիճան ջերմացել էր, բայց վարպետները անընդհատ շարունակում էին վերանորոգութիւնը խիստ շտապ:

— Շտապեցէք, գոռում էր կարւածատէր եղնակ իշխանը, զուր ժամ մի վատնէք: Այսօր անշուշտ նւիրակի հետ ճանապարհ պիտի ընկնէք, որ առաւօտ Վարդեհերի տօնին հանդիսատես լինենք Վիշապամում ականջներով լսէք նրա պատգամները:

Դուռ ու բակ լցւել-կարել էին դրացիներն ու ծանօթները, որոնք անվերջ կրկնում էին.

— Երանի ձեզ, երանի աչքերիդ. թող Վիշապամում

հաճելի լինի ձեր պատարազը և նա որդուն՝ Վիշապամունքը թախանձէ առատ թաթաւով օգնութեան հասնելու մեր հանդաստանին:



Յետինք դեռ չեղած եղնակ իշխանի ապարանքից դուրս եկան և ճանապարհ ընկան ուխտաւորները իրենց քեռնաւորւած ջորիներով, ուղտերով, գրաստներով և եղներով: Սրանց շրջապատել էին զոյնզգոյն տարագներով զարդարւած ջորեպաններն ու անասնաղարմանները, որոնք աղմկալի առաջ էին գնում անվերջ զննելով անասունների

բեռներին։ Սպասաւորների խայտաճամուկ տարագի նման բազմերանդ զարդարւած էին կարաւանի զբաստները իրենց զարդարուն վզնոցներով, երասանակներով և բեռները ծածկւած էին գունագեղ և շերտաւոր ջէջիմներով, կարպետներով։

Կարաւանը դեռ աւանից դուրս չէր եկել, երբ եղանակ իշխանի տիկինը բազմեց սպիտակ և վիթխարի ջորիների բարձրացրած պատգարակը իր կրկին նաժիշտներով։ Տիկնոջ պատգարակին հետեւյին ուրիշ հինգ պատգարակներ, որոնց մէջ տեղ բռնեցին իշխանի գսորիկները, հարսները, թոռները նաժիշտներով և աղախիններով։ Պատգարակներին շրջապատել էին վաթսունը և վեց կըտրիճ ձիաւորներ, որոնք զինւած էին գօտուց կախւած կարճ ու լայն դաշոյններով և երկար նիզակներով, երկծայր արոյրէ բզանները ոսկու նման շողողում էին արեւի ճառագայթների տակ։

Մի քանի րոպէից պատգարակներն հասան բեռնաւկերների կարաւանին և շարունակեցին իրենց ուղին բեռնակիր անսասունների վզերից կախւած զանգակների զողանջիւնով։ Զորեպանները յետ չմնալու համար անվերջ բգում էին ջորիներին իրենց որածայր մահակներով և կրկնում։ — Զն, չն, որոնք դաշտից դուրս գալիս և դարիվերի տակ համնելուց յետոյ, աւելի դանդաղեցրին իրենց քայլերը։ Գրաստներին աւելի խրախուսում էր և առաջ մղում այն երգերի և չերգերի եղանակները, երգիչների ուժեղ և խրոխտ ձայնը, քան թէ ջորեպանների բզանները։ Իսկ դաշտից դուրս գալուց և Գառնու հովիտը մըտնելուց յետոյ, արևամտի ժամին, վերջալոյսի բազմերանդ գոյների, արծաթափայլ, ոսկեզեղուն ամպիկների և բոցավառ ու մանուշակի ցոլքերի ազգեցութեան տակ այնպէս էին երգում երիտասարդներն ու պատանիները, որ հովիտի ամբողջ կողերը — ապառաժներն ու բարձունքները

որոտնընդոսա արձագանք էին տալիս նրանց երգերին։ Գլխաւոր պատգարակի մէջ բազմած էր տիկին Անուշը՝ իշխանի սիրելին և ժողովրդի պաշտելի կինը, որի կողքերին չոքած մատաղահաս նաժիշտները անվերջ հովհարում էին կիսաթմիր ընկողմանած տիրուհուն։ Անուշը դեռահաս չէր, նա քառասուն գարուն էր անցկացրել, բայց նրա կաղմը, թարմութիւնը, փայլուն աչքերը, մանաւանդ սաթի նման ու ծամերի հիւսքերի շարանները տիկնոջը դեռատի օրիորդի տեսք էին տալիս։ Նաժիշտները հաղիւ տամնեինդ տարեկան լինէին, բայց այնքան ուշիմ էին շարժւում, որ նկատողը կարող էր նրանց կըրթութեան վրայ հիանալ։ Նաժիշտներից մէկը ոսկեհեր, կապոյտ երկնագոյն աչքեր ունէր, միւսը շագանակի մազեր ձիթագոյն բիլերով։ Երկուսի էլ մորթը ձիւնի նման սպիտակ էր, երկուսի էլ այտերը վարդի նման, իսկ շուրթերն ու ականչները կարծես որթան կարմրով ներկած լինէր։

Թէ տիկինը և թէ նաժիշտները բեհեզի թափանցիկ հանդերձ էին հագած, տիկնոջը վարդագոյն, իսկ նաժիշտներինը մարմնագոյն, որոնց մէջ ամփոփւած մարմնի ձեւն ու կազմը նկատւում էր։ Տիկնոջ գլխի վարսակալը, ոսկեզօծ կապերն ու նրանց միջի գոյնզգոյն գոհարները նըրան զանգանում էին հարճերից, որոնց վարսակալը թարմ վարդերից էր հիւսւած։ Կարաւանի երիտասարդների և քաջամարտիկների աչքերն ու ուշքը կենտրոնացած էին տիկնոջ, հարսների ու օրիորդների պատգարակներին, որոնց բոլորի էլ հագուստի ու զուքսի մէջ շատ քիչ տարբերութիւն կար։

Զրահաւորւած կարիճները զնում էին պատգարակները շրջապատած, նետ աղեղները, սուր նիզակները միշտ ձեռքերին պատրաստ, շրջահայեաց, որ կարեսը գէպքում կարողանան անակնկալների դէմ մարտնչել, վայրի գա-

գաններից և լեռնական հրոսակներից պաշտպանել։ Կտրիճ-ները շրջապատած էին երկու դեռահաս իշխանի, որոնցից անդրանիկը պատգարակների աջ և կրտսերը՝ ձախ կողմից էին առաջնորդում հետեւորդներին։

Զորիներին, ուղտերին և գրաստներին բեռնաւորւած տանում էին ուխտաւորների վրանները, փուածքը, ուտելիքի պարկերը և զոհերը։ Եօթը զարդարած երկծին խոշոր ցուկեր առաջ էին վարում, եօթը վարագ, յատկապէս որսւած Արմատիրի շամբում և փակած պատգարակ վանդակներում, կրում էին յատուկ գրաստներ։ Եօթանասունը եօթնական գառ և ուլ հինգական ամսւան, եօթը մեծամեծ վանդակներում գետեղւած էին հաւ, բադ, սագ, տատրակ, կաքաւ, փասիան և աղաւնի, որոնք ուղտերին էին բեռցած։ Գրաստները տանում էին եօթը զոյգ այծի տկերով գինի, եզներին բարձել էին եօթը կրկնաշւալ շարմաղ ալիւր, եօթը մախաղ օսլայ, եօթը պարկ չամիչ ու նուշ և եօթանասուն խախալով բաղարջ ու գաթայ։

~~Բացի~~ այս տիկնոջն յանձնւած էր ասւի, բամբակի, քթանի և գոյնզգոյն ու ծաղկէ նուրբ կտորներ բաշխելու մեհենական սպասաւորներին, քրմուճիներին և քրմերին։


Կարաւանն անընդհատ բարձրանում էր Գառնիի ձորով, օձապտոյտ ճանապարհով առաջ գնալով առւակի աջ ու ձախ ափերով։ Բեռնակիրների վզերից կախւած զանգակներն անվերջ գնդզնգում էին, այդ ձայնի ներգործութեան տակ անասունները շօրօրալով վեր էին բարձրանում, կարծես անբան կենդանիներն էլ հասկանում էին, թէ ուխտի զւարձութեան էին գնում։

Երեկոյեան զով քամին սփոել էր հովութիւն, դաշտի տոթից դուրս եկած կարաւանին տիրել էր ուրախութիւն և հրճանք։ Զիաւորներն իրենց քաղցր ձայնով սկսել էին երգել ու թնդացնել ձորը, գրաւելով ուխտաւորների ուշքն

ու միտքը։ Դեռ արեի ճառագայթները չէին անհետացել, երբ հեռւից նկատեցին Գեղարդի լեռնալանջերն ու ապառաժի կողերում փորւած մեհեանի դռներն ու քարայր քնակարանները։ Շատ հեռւից արդէն նկատել էին մշտավառ ճրագները, որոնց ձէթը, ճարպը և մոմը մատակարարում էր ամբողջ դաշտը։

Ճրագվառոցին ուխտաւորները հասսն Գեղարդի մեհեանը։ Զիաւորներն իջևանեցին Վիշապաքաղին և Վիշապափայլին նւիրւած տաճարի բակում։ Տիկինն իր գըտարիկների և հարսների հետ իջան պատգարակներից, անմիջապէս վառեցին սպանդարապետանուէր մեղրամսմերը, բաժանեցին երկու սեռին էլ, զնացին կանգնեցին ժայռամիջի ապառաժեայ գաւթի հովանոցում, սպասելու մեհենական գոների բացման։ Քուրմերն իսկոյն իմաց տւին քըմուհիների աւագուհուն, որը քարէ սանդուխներից ցած իջաւ, սիրալիր ընդունեց ուխտաւորների ողջոյններն ու մաղթանքները և նրանց ձեռքերից մոմերն առնելով մտաւ մեհեան ճրագները վառելու Վիշապաքաղի և նրա զուգակցի՝ Վիշապափայլի անդրիների առաջ։ Տաճարի խորքում, ապառաժի կողին, եօթն աստիճան պատւանդանի վրայ կանգնած էին անդրիները։ Այս պատւանդանների ետեւ, գարձեալ ապառաժից, դուրս էր փորւած մի մեծ սեղան, երկու գրկաչափ երկարութեամբ և երկու թիզ լայնութեամբ։

Վիշապաքաղի և Վիշապափայլի անդրիները կանգնեցրած էին բոլորովին մերկ, ամակերի գլխին, գեղարդածայր նիզակները ձեռքերին, դէմքերն աջ ու ահեակ, կարծես սլանում էին երկնքում։ Հողմերը նրանց մազերը ծփացնում էին, ամպերը ծիւնափայլ ծիրանու նման տարածւել էին նրանց չորս կողմը, թեթեի տւած, կարծես թէ թռչում էին օդի մէջ։ Նրանց վէս հայեացքից կայծեր էին փայլատակում, նրանց շրթունքներից ու պնչներից



Թւում էր, թէ որոսներ էին թնդում: Հեռւից, դռան
բացւածքից զննում էին ուխտաւորները այս ահաբեկ տե-
սարանը և չոքէչոք երկրպագում, որ իրենց և իւրային-

ներին հաշտ աչքով նայեն որոտների, փայլակների սըփ-
ողները և իրենց հանդերն ու երամակները ազատեն չար
պատուհամներից:

Այս միջոցին սպասաւորներն ու սպասուհիները բա-
ցին սպարկերն ու կապոցները, Վիշապաքաղի և Վիշապա-
փայլի համար յատկացւած կերպասէ նւէրները, ուտելիքը
և մեղրամոմերը գուրս բերին, տարան յանձնեցին քրմու-
հիներին յատուկ քարայրում: Այդտեղ քրմապետն առաջ
եկաւ, ընդունեց վիշապաքաղի յատուկ զոհի այծիկներին,
որեց դանակը և անմիջապէս տեղ սպանդին, որը զոհերը
գենեց: Մինչ սպանդը կատարում էր իր պաշտօնը, քըր-
մապետը եղի աքին թաթախեց զոհերի արիւնի մէջ և
սրսկեց, զոհացողական աղօթքը մրմնջաց ու ասաց աչքե-
րը երկինք յառած.

— Թո՞ղ քաղցրանայ Վիշապամօր և Վիշապահօր աչքը
համայն աշխարհի վրայ, յատկապէս ձեր կալւածների,
արօտների, պարտէզների և բանջարանոցների վրայ, դրանք
աղատէ կայծակից, կարկտից, ցրահարից, կրակից և այլ
անակնկալներից: Աղերսում եմ Վիշապաքաղին, Վիշապա-
փայլին, որ ամեն վտանգից Խալդի գաւակներին, ինչպէս
Ռւբարդի, նոյնպէս Արտուրարդի սահմաններում, յատկա-
պէս Բլրակի եղնակ իշխանի շնչաւոր և անշունչ ամեն
մի ստացւածքը պաշտպանէ սպանդարապետական պա-
տուհամներից:

Խսկոյն այծերի մորթիները ըերթեցին, որն էլ տիկ
հանեցին, կրակները վառեցին, ճարպի կտորներից այրե-
ցին և մսերից խորոված պատրաստեցին, որ կերակրեն
մեհենական սպասաւորներին: Որխտաւորները իրենց զար-
դերից մեհենական մաս ու բաժին տալուց, լիաբերան
օրնութիւններ ու յուսաղբութիւններ ստանալուց յետոյ,
իրենց պայտսակներից ընթրեցին ու ճանապարհ ընկան
դէպի Վիշապազանց բարձունքը:


Պատգարակ նստելուց առաջ տիկինը համբուրեց, օրհնեց մի եօթը տարւան կոյս, որին հագցրել էին սպիտակ շորեր և զարդարել էին սպիտակ վարդերով և շուշաններով, առաջնորդեց Գեղարդի մեհեանի դռան առաջ, չոքեց և խնդրեց, որ-այդ անմեղ աղջկան աղախին ընդունեն ծառայելու վիշապաքաղի և վիշապափայլի տաճարում։ Քրմուհիներն իսկոյն առաջ եկան և կոյսի ձեռքից բռնելով տարան մեհեանի գաւիթը, որ այդ ընծայւած կոյսին զննէ աւագ քրմուհին և վճռէ, թէ կարելի՞ է ընդունել։ Քրմապետուհին չորած խնդրւածք էր անում վիշապաքաղից, որ փորձանքներից աղատէ ուխտաւորներին Այդ դիմումից սթափւած ետ դարձաւ, ոսից գլուխ զննեց ընծայւածին, քիչ խորհեց և ասաց ընկերուհիներին։

— Շատ գեղանի է դառնալու, գուցէ մի օր աւագի աստիճանի համնի։

— Անշուշտ, պատասխանեցին բոլորը միաձայն և հաւանութիւն տւին ընծայւածին մեհենական ծառայութեան ընդունելու։

Գոհ սրտով տիկինը իր շնորհակալութիւնը յայտնեց մեհենական քրմուհիներին, քրմապետին և բարձրանալով մանական դէպի իրենց ուխտատեպատգարակ, ճանապարհ ընկան դէպի իրենց ուխտատեպը—վիշապազմնց բարձունքը։

Աղջամուղջ էր, գիշերային մոայլը գեռ չէր անհետացել։ Ամառւան տապ գիշեր էր։ Թէս զեփիւոը մեղմ ափչում էր, բայց օղը, ջուբը, մանաւանդ գետինն ու ապառաժները ցերեկը արևի ջերմ ճառագայթների տակ այնպէս էին բորբոքւել ու տաքացել, որ ամբողջ գիշերը անցնելուց յետոյ, լուսադէմին էլ դարձեալ ջերմացնում էին անցյորդին։ Գեղարդի ձորից վեր էր բարձրանում ուխտաւորների կարաւանը, որի աղմուկը, պրատաների սմբակների զրմիւումը, զանգակների ճայնը խանգարել էին բնութեան հանդիսուը։



Բնութիւնը խաւարի և խոր քնի մէջ էր, գեռ վարդամատ արշալոյաը չէր բոցավառել արևելքը։ Կարաւանն էլ գեռ լեռնագաշտը չէր բարձրացել, երբ նախ-արշալոյսի աղօտ շողքերը սփուեցան և արևելքում հորիզոնը ամպիկների և մառախուղի արանքից մութ-մանիշակագոյն երիզով զարդարւեց։ Իսկոյն ձիաւորներից աւազի սպիտակ նժոյգը խրինջաց և ցատկրտելով առաջ անցաւ։ Իշխանների ձեռքերում ճոճացող նիզակների կրկին ծայրերը, սպիտակ թաղիքէ երկար քոլոզները, պղնձէ վահանները սկսեցին փայլփլել արշալոյսի շողքերի դէմ։ Սպիտակ նժոյգի կայտառ ոստումները ոգեորեցին միւս նժոյգներին, ձիաւորները խաւարի խոլ մտքերից սթափւած ասպանդակեցին երիվարներին՝ սանձերը պինդ-պինդ քաշեցին։

Այս շարժումները կենդանացրին ուխտաւորներին, ուրոնք ոգկորւած սկսեցին քննել իրենց շուրջը կատարւածները։ Որքան որ աօթը և կիզիչ արեի ճառագայթները դեղնեցրել, չորացրել էին Ուրարդի դաշտի բերքն ու բուսականութիւնը, որ անձրեի ջրի կարօտ խանձւել էր, այնքան նրա հակառակ դալարապատ էին Գեղարքունիքի լեռնալանջերն ու գագաթները, որոնց մէջ քնքոյշ կանաչը, բաղմերանդ ծաղիկների անուշ բոյրը հրապուրում ու աբբեցնում էին ուխտաւորներին։ Վիշապաղանց բարձունքի մեջմ կլիման, զով ու խոնաւ քամիները, ցողն ու շաղը, աղբիւրների ջրերը և լճակները պաշտպանում էին այնտեղ դալարը զարնան սկզբներից մինչև ուշ աշունը։ Այստեղ արօները լիքն էին ոչխարներով, այծերով, կովերով և վայրի կենդանիներով, որոնք միշտ ճարակ ունեին մինչև ձիւնի սաւանով դաշտի ծածկելը։ Խոտն այնքան էր բարձրացել, որ ծածկել էր քարի ու ապառի կտորները։ Որքան աստիճանաբար արշալոյսը զօրանում էր, այնքան գրաւիչ էր դառնում բնութիւնը իր բազմերանդ տեսարաններով։

Այդուն հաճելի գեփիւրը, գեղագւարճ դալար տեսարանը, մոյզ-կանաչ անտառները, բարձրաբերճ ապառիները, ջինջ երկնքի տակ այնպիսի սքանչելի տեսարան էին կազմել, որ զրաւել էին կարաւանի ոչ միայն քնքոյշ սեռի աչքն ու ոռոնգը, ուշքն ու միտքը, այլ նոյն իսկ ջորեպաններն ու բանտորները հիացած էին բնութեան հրաշալիքներով։ Կարաւանը գիշերն անընդհատ, մինչև լոյս շարունակելով իր ուզին, յոզնած ու դաղրած, թուլացած ու տանջւած էր հասցրել ուխտաւորներին լեռան բարձունքը, բայց զով եղանակը, անուշ բոյրը, մանաւանդ արշալոյսի բաղմերանդ տեսարանները այնպէս էին հրապուրել ուխտաւորներին, որ նրանք մոռացել էին իրենց ջարդւած ոսկորների ցաւն ու խոստուկը, դիւթւած բնու-

թեան հրաշալիքներից, անյագաբար զննում էին շրջապատը, հեռաւոր հորիզոնը և ազանաբար ծծում— չնշում անուշ բոյրը։ Լեսների բարձունքից աչքի էին ընկնում ծովահայեաց լեռնագագաթները, Արագածն ու Ծաղկոցաձորի բարձունքը, Մասիսն ու իր մանրունքը, Բարդողի ահաւոր դաշտը։ Սրանց գերիշխում էր գեղատեսիլ Մասիսն իր սպիտակափառ դագաթով, արծաթափայլ ճառագայթներով։ Որքան վեր էր բարձրանում կարաւանը, այնքան վեհանում և սքանչանում էր տեսարանը։

Վերջապէս կարաւանը հասաւ վիշապազանց սարահարթները, երբ արեի առաջին շողքը պսպղաց հորիզոնի ետեից և երկնքում նկատւեցին լուսափայլ ճառագայթները։ Հեռակ նկատւեցին վիշապազունքերը մեծամեծ աւազան-

100
100
100



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ 7/11. 1922
Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ներն ու լճակները, իրենց լուրջ կապոյտ ջրերով, գալարապատ ափերով և միզապատ բարձունքներով։ Լճակների հայելանման հարթ մակարդակների երեսին խոկոյն ցողացին սպիտակ ձաճանչները, կարծես երկնային շողը վայրկեանական արագութեամբ արծաթապատեց ջրերի խաղաղ երեսները։ Ահաւոր լեռնադաշտի երեսը ծածկւած էր մի քանի տասնեակ աւազաններով, սրոնց մէջ ամեն կրղմից նկատելի էին սրբազն վիշապազանց տոհմի ձկնանման անդրիները գանազան ձևերով ու դիրքերով։ Ամեն մի աւազանում մի քանի տասնեակ վիշապարձանները էին կանգնեցրած, ձկի մարմով, ուղղաձիղ, որոնց աչքերը երկինք յառած, բերանները վերի կողմը բացած, կարծես աքնում էին երկաքից ամպերը ցած քաշել, ծարաւներն յագեցնել, աւազանները լցնել, առուները յորդել և ջրերն իջեցնել դաշտերը, ոռոգելու աշխատաւորի հանդաստանը։

Վիշապազունները ինչ դիրքով ու պատկերով որ երևացել էր ժողովրդին գարերի ընթացքում, կամ թէ նրանց ինչպէս էին երևակայել աւազանների սպասաւորները, երկրի գուսանները, մտքի քարոզիչները, այնպէս էլ արձանացրել էին քանդակագործները, այդ որձաքար անդրիներով յաւերժացընել նրանց յիշատակը։ Բազմաթիւ էին այդ հսկայ անդրիները, կերտել էին առանց խնայելու ջանքերն ու աշխատութիւնները։

Իշխանը՝ տիկին Անոյշի անդրանիկը, շուրջը զննելուց յետոյ, մօտեցը իր յովտակը ու խատաւորների առաջնորդի ջորուն, և ցոյց տալով աւազանի մէջ կանգնեցրած ձկների որձաքարէ անդրիներն, հարցըց։

— Ինչի՞ են ուղղաձիղ, պոչի վրայ կանգնեցրել ձռւկերի անդրիները, չէ՞ որ ձկերը հորիդոնական ուղղութեամբ են լողում ջրի մէջ։

Ուխտաւորներին առաջնորդում էր վիշապամօր վանքի նւիրակը, որը ման էր գալիս դաւաոից գաւառ, վե-

րահսկում վիշապազանց առւի մաքրութեան, վերանորոգութեան, ջրի արդար բաշխման վրայ։ Նա քարոզում էր անձնւիրութեամբ պաշտպանել և բարեկարգել առուները, կապւել հոգով վիշապազանց տան հետ; ուխտի գնալ և ջրաբաշխութեան կանոնաւորման աջակցել։ Նւիրակը ոչ միայն քուրմ էր, այլ նա նշանաւոր գեր էր կատարում քրմական շրջանում իր գիտութեամբ։

— Իշխան, պատասխանեց նւիրակը, զրանք ձկների անդրիներ չեն, այլ վիշապամօր և նրա սերունդի պատ-



կերներն են այլեայլ ձևերով։ Ինչպէս ծովի վրայ Մայր-
Վիշապը՝ ինքը թաթարը ուղղաձիգ սիւնի նման կանգ-
նում է, երբեմն միաժամանակ հինգտասը տեղ սիւնա-
ցած բներով, այնպէս էլ աւազանների մէջ նրա անդրի-
ները կանգնեցրել են ձկնածե, որոնց թիւը 666 է հա-
մարում։ Հնդկական քուրմերը իրենց աստւածների երե-
ւոյթները հասցնում են 333 հազարի։ Երեք թիւը նրանց
համար սրբագործւած է, մենք ունենք սրբագործւած
երեք զոյգ մի կենտ 7 թիւը, որը կազմում էր մեր եօթն
անունը։

— Վիշապամայրը իսկապէս ինքը մըտեղ է ապրում,
հետաքրքւած հարցրեց իշխանը նւիրակից, որ սիրայօ-
ժար պատմում էր ունկնդիր երիտասարդին հին անցեալ
նախորդներից իրեն հասած աւանդութիւնները։

— Նա միշտ այս աշխարհի վրայ է ապրում, զլսա-
ւորապէս ջրերի մէջ, լճակներում, ծովերում, ասաց խօ-
սակցութեան լրջութիւն տալով նւիրակը։ Մայրը վիշապը
ընդհանրապէս ծովերի երեսին է, որն անդադար շողիա-
ցնում և գոլորշիացնում է ջուրը, մրրկում ու փոթորկում
է ծովերը, որպէսզի առատ շոգի բարձրանայ դէպի եր-
կինք։ Երբ կարիքը սաստկանում է, նա յաճախ սիւնածե
կանգնեցնում է ծովի ջուրը և երկինք մղում, երբեմն
նոյն իսկ ջուրը իր բովանդակած ձկներով և գեռուներով
դէպի ամպերն էր բարձրացնում։ Մայր վիշապի անդրա-
նիկը՝ Վիշապահայրը, որ միշտ երկնային բարձունքումն
է, ամպերի գլխին, անվերջ վեր է ձգում, կլանում է ինչ-
պէս գոլորշիները, նոյնպէս ծովի ջրի անոյշ մասը, թող-
նելով աղին ու լեղին յատակում։ Վիշապահայրը այդ շո-
գիներից ամպեր է կազմում, տանում է ցամաքի խոր-
քերը և երկնքից տեղատարափ վար է թափում երկրի
երեսին, չորացած ու շիկացած գետինը ջրերու, հովա-
ցնելու, բոյս ու անասուն յագեցնելու, զովացնելու,

թարմացնելու, վերստին կեանք ներշնչելու, աճեցնելու,
բազմեցնելու համար։

Ինչից է առաջացել Վիշապամայրը։

Նա լուսոյ հօրից՝ արեգակի բոցից բաժանւել է,
եկել աշխարհս կազմել։ Նա լուսոյ հօր մասն է։ Վիշապա-
մայրը չկարողանալով տանել երկնային ջերմութիւնը,
անջատւել ու կազմել է երկիրը և կեանք է տւել, ինչ-
պէս իր անդրանկին՝ Վիշապահօրը, նոյնպէս անդրան-
կունուն՝ Ոսկեմօրը, որոնք կենդանացրել են ու զարդա-
րել ամբողջ աշխարհ։ Վիշապահօրը երկնքից առատ
թափում է երկիր ցող ու անձրե, Ոսկեմայրն էլ ուղղե-
լով այդ սիրոյ յորդառատ ազբիւրներով արտամղում է
երկրի միջից անհուն և անսահման բարիք։

— Ուրեմն Վիշապագունները անջատ են ապրում։

Բեղմնաւորման և աճեցման սահմանողները յաւի-
տենականապէս տապում են իրար սիրով։ Լուսոյ հայրը
Վիշապամօր անջատումից անհուն վշտով համակւած ա-
ռաւատից մինչև իրիկուն իր ճառագայթներով լողում է
ջրերի երեսին, թափանցում է խորքերը, ձգում է իրեն
Վիշապամօրը, բայց վերջինս իր հարազատների սիրուն
չի կարողանում թողնել երկիրն ու վերդառնալ նախկին
հուր հնոց լուսոյ հօր բնակարանը։ Վիշապահայրն ու Ոս-
կեմայրն անսահման ժամանակներից տապում են իրար
սիրով, բայց այդ սէրը չի զօրում, որ մէկը ամպերից
ցած գայ, անջրդի թողնէ երկիրը, կամ Ոսկիամայրը եր-
կինք բարձրանալով՝ առանց բեղմնաւորութեան թողնէ եր-
կիրը—անսապահի վերածէ։ Մայր ու որդի իրար հասնե-
լու, իրար գրկելու ցանկութիւններից և ըղձերից բորբոք-
ւած յաճախ ծովերի վրայ, թեներն իւար են տարածում,
Վիշապահայրը ամպի կախւած բազուկներով, Վիշապա-
մայրը ջրերի սիւնացած դաստակներով իրար գրկելու,
կարօտներն առնելու, զգացումներն իրար հաղորդելու,

առանց սրտերի փափազներին համարելու, ըովէական համապումից յետոյ, վերստին անջատում են:

«Վիշապահայրն այնքան է սիրում կեանքը՝ բոյսն ու կենդանութիւնը, այնքան նրա սրտին մօտ է կենսական բեղմաւորութիւնը, աճումն ու մուսնդը, զարգացումն ու բարգաւաճումը, որ նա ծովերի շոգիացած ջրերը երկինք համարելու պէս, իսկոյն թողնում է Վիշապամօրն, անցնում է լեռները և աշխարհը ոռոգում, որպէսզի իր սիրելի Ուկեմօր արտադրած կենդանութեան առատ ջուր հասցնէ, նրանց աձեցողութիւնը սաստկացնէ ու արագացնէ: Ուկեմայրն, որ առատութեան եղջիւրներով ոռոգում է դաշտ, ձոր ու սար, հարազատ մօր նման դիեցնում է բուսական աշխարհը, իր կաթով անմահութիւն է բաշխում կենդանական աշխարհին, այնքան է հոգւով կապւած այդ կենդանութեան հետ, որ թէև տառապում է Վիշապահօր սիրով, բայց նա յաւերժական կեանքն ու գոյութիւնը կենդանութեան աձեցման և բողբոջման մէջ նկատելով, չի թողնում երկիրն ու չի բարձրանում իր պաշտելի Վիշապահօր մօտ:

—Ել ի՞նչ աստւածներ են, որ իրար սիրով տապում են և իրարից անջատ են ապրում, իրենց բաղձանքին չեն կարողանում հասնել, ասաց գեռատի իշխանը, ուշքն ու միտքը լարած լսելով նւիրակի նկարագրութիւնը:

—Շատ պարզ է, շատ որոշ, ասաց ժպատալով ծերուկ նւիրակը: Եթէ լաւ մտածենք, աշխարհում ոչ մի բոյս, ոչ էլ կենդանութիւն չենք կարող գտնել, որ աճած լինէր առանց Վիշապահօր զգալի ներգործութեան: Հեռացըու ջուրը, բաժանիր խոնաւութիւնը ամեն մի կենդանութիւնից, նա իսկոյն կը չորանայ: Իսկ չորանալը մահան և ջնջման հետեանք է: Վիշապամայրն անջատել թիառութից —արևից, որ կեանք տայ, յաւերժական կենդանութիւն բաշխէ աշխարհին: Եթէ կեանքը աշխարհում

մեռնի, մեռած է ինքը Վիշապամայրը իր ամբողջ սերնդով: Որովհետև անմահ է և յաւիտենական Վիշապամայրը, նրա անմահութիւնը աշխարհի կեանքի մէջն է: Առանց ջրի աշխարհի երեսին չի կարող բեղմնաւորել ոչ մի սերմ: Ամեն կեանք անմիջապէս կդադարի, եթէ մի ժամ, մի օր գագարեցնէ Վիշապահայրը իր գորովալի խնամքը: Եթէ դադարի կենդանութիւնը, իսկոյն պէտք է դադարած համարել Վիշապամօր գոյութիւնը: Նախ պիտի անհետանայ ջուրը —խոնաւութիւնը, ցողն ու անձրեները, որպէսզի ջնջւի կենդանութիւնը: Իսկ ովկ կարող է ջնջել ջուրը: Կենդանական և բուսական աշխարհը ինքը Վիշապահայրն է, կերպարանափոխւած պատկերներով, ինքն է, որ մնանում է Ուկեմօր կաթով և ինքն է, որ իրեն կեանք է տալիս: Ո՞ր արարածը, ո՞ր գոյութիւնը կարող է ինքն իրեն չը սիրել, կարող է ինքն իր գոյութիւնը ջնջել: Ահա այս պատճառով Ուկեմայրն ու Վիշապահայրը թէև իրարից անջատ են ապրում, իրար սիրով տառապում են, բայց ամեն ըովէ, ամեն մի վայրկեան իրար ընդհարուում են: Նրանք իրենց բաղձանքին հասած են, միայն թէ իրենց գոյութիւնը յաւերժացնելու համար անջատ և իրար կարօսը քաշելով են ապրում:

—Ուրեմն մենք էլ Վիշապահօր մասն ենք կազմում, մենք էլ աստւած ենք, մենք էլ Վիշապազանց անմիջական արտայայտութիւնն ենք, ասաց խոնուն դէմքով դեռահաս իշխանը:

—Այդ անկասկածելի է, իշխան, ասաց ձիու սանձը քաշելով կարաւանի դեկովարը և դառնալով տիկնոջը.

—Ահա արևի ձառադայթները հորիզոնից բարձրանում են, մենք էլ մօտեցանք Վիշապազանց աւազանները: Հարկաւոր է կանգնեցնել կարաւանը, ցած գալ ձիերից և հետի շարունակել մեր ուղին:

Անմիջապէս ուխտաւորներն իջան իրենց նստած ձի-

Երից, ողատգարակներից և խումբ խումբ առաջ ընկանչ Զորեւլանները կարաւանն ուղղեցին լճակների արևմտեան բարձունքները, որտեղ բարձրացրել էին սև ու սպիտակ վրանները և գոյնզգոյն զարդարանքներով տաղաւարները։ Խումբ խումբ բաժանւած առաջ էին գնում ուխտաւորները, մունջ, ամեն մարդ իր խոհերին անձնատուր եղած երբ նովրակը մօտեցաւ խոհուն իշխան Ցոլակին, վերջինս կրկին դիմեց նրան։

— Միթէ Վիշապամայրը մշտապէս ապրում է այս լճակներում։

— Ոչ, նա ամեն աեղ է, բոլոր ծովերումն է։ Ուրարդայի մայր վիշապը թէկ յաճախ յայտնւում է՝ Վիշապապանց աւագաններում, բայց նա միաժամանակ յայտնւում է Տոշպի, (Վանի), Պարսուայի) (Կապուտանի), Գեղամի (Սևանի), Զարիշատի (Զլդը), նոյն իսկ Պոնտական և Կառպիականի ջրերում։ Ինչ որ Վիշապահայրը երկնքում, նոյնն է Վիշապամայրը ծովերում, միենոյնն է Ուկեմայրը ցամաքի վրայ։ Սրանք մի բնութիւն, մի կամք և միենոյն ծագումն ունին։ Նրանց ծգուումն է աճեցնել, զարդարել ամբողջ երկիրը և անապատներն էլ խլել Դեկի իշխանութիւնից դրախտի վերածել։

— Եթէ այդքան սիրում են կեանքն ու բոյսը, եթէ կենդանութիւնը նրանց իսկական արտայատութիւնն ու պատկերն է, ապա ինչի՞ են թողնում, որ Վիշապաքաղը Վիշապափայլի հետ կայծակով խփէ, այրէ ու փչացնէ կենդանիներն ու անտառները։ Կամ ինչի Վիշապաքաղը կարկտահարում է մեր այգիները, բանջարանոցները և արտերը։

— Միրելի իշխան, Վիշապահայրը միշտ բարի է և կարեկից գէպի կեանքն ու կենդանութիւնը, ահարկու գէպի չարն ու բարին բնաջնջողը։ Վիշապահօր հակառակորդը՝ Սպանդական-Դեր, որ նրա եղբայրն է և ապրում է


Երկրի տակի սպանդարապետական խաւարի ու կրակի սահմաններում, միշտ տքնում է բնաջինջ անելու կեանքն ու կենդանութիւնը և աշխարհ վերադանելու հրոյ բոցերի թագաւորութիւնը։ Վիշապահայրը առատաբար և անխնայաբար բաշխում է ջրային անհուն բարիք համայն կենդանութեան հետ, նոյնպէս իր տիպարի, իր հոգու բնակարան մարզուն, որը տիրում է աշխարհի բերքին։ Բայց երբ Դեկի հոգուն բնակարան դարձած անկուշա մարդիկ բոնութեամբ և նենգութեամբ իրարից յափշտակում են երկնաշնորհ ողորմութիւնը, անապական ջուրը, պատճառ են գառնում իրար հանդերի, պարտէղների, նոյն իսկ կեանքերի չորանալուն, վշտակոծ հայրը ժամանակաւորապէս գառն մտքերին տարւած ուշքը ցրւում է, Վիշապաքաղն ու Վիշապափայլը տոպարէզ են դուրս դալիս որոսներով, կայծակներով և պատժելու մեղաւորներին, կենսասպաններին։ Այսպիսի պատուհաններից ազատւելու համար մարդիկ պարտաւոր են երբէք չը յափշտակել, չիւրացնել իրենց ընկերների այդին, մարզը, բանջարանոցը, արտը, եղն ու գոմէշը, կթանն ու բեռնակիրը, որոնք օգնում են երկրի մշակաւթեան ու ծաղկման, կատարելագործութեան, զարգացման, մնունդին ու հագուստին։ Ամեն մի անհատ, որպէս մի հիւլէ Վիշապամօր գերիշխանութեան, պարտաւոր է իր համանումանին պաշտպան կանգնելու, օգնելու, նրա իրաւունքը ոտնահարողի դէմ կռւելու և զոււելու, ինչպէս ամեն մի անհատի համար անխոնջ տքնում են Վիշապահայրը, Ուկեմայրը իրենց հարազատներով։ Պէտք չէ ստոր արարքներով զայրացնել Վիշապահօրը, որպէսպի հնարաւորութիւն գտնեն Վիշապաքաղն ու Վիշապափայլը այցելելու մեր դաշտերն ու լեռները, որոնք վրէժինդրութեամբ լցւած գէպի կեանքն ու կենդանութիւնը այրում ու փշրում են աշխատաւորի մշակութիւնը։ Վիշապաքաղը Սպանդարապետական հրից է կազմւած,

որը բողբոջելու յատկութիւնից գրկւած է, այդ պատճառով էլ նա աճեցողութեան հակառակորդ է: Վիշապափայլը փայլատակում է, անգիտաբար կայծակնահարում աջ ու ձախ կենդանութիւնը, իսկ Վիշապաքաղը որոտում է, դղրդացնում, սասանեցնում է աշխարհ: Այս պատճառով յափշտակողները գրկողները դատապարտւած են այդ զոյգին զոհեր մատուցանելու, կոյսեր ընծալելու, սրանց սրտերն ամոքելու, որպէսզի ազատւեն դրանց զարհութելի վրէժինդրութիւնից և պատուհամներից: Երէկ իրիկուն անշուշտ նկատեցիր Վիշապաքաղի մեհեանի որմերի վրայ քանդակւած բազմաթիւ երկծայր, կայծակնացայտ, ոսկեփայլ, յղկուն Գեղարդները, որոնք գործածում են ամպրոպաշին որոտներով երկնքից ի վեր իջնելիս, շանթեր ու բոցեր տարածելիս, բոյս ու կեանքն այրելու, մրկելու և չնջելու համար:

Այս պատմութեան տպաւորութեան տակ առաջ էին գնում նւիրակն, իշխանը և ընկերակիցները դէպի մեծ աւագանի ափը, ուր սովորաբար երեսում էր Անոյշմայրը, կամ Վիշապամայրը ուխտաւորներին, նրանց երկրպագութիւնն ընդունում և երբեմն էլ պատգամներ էր տալիս: Վիշապամայրը երեսում էր միայն պարզ օրերին, արևի բարձրանալուն մօտ: Այս պատճառով շտապում էին ըռապէ առաջ համնել լճակի ափին, տեսնել Անոյշմօրը, նրա օրհնութիւններին ու պատգամներին արժանանալ:

Ծայգոն սառը գեփիւը փչում էր: Հովի մեղմիկ սուլոցների հետ լսում էին Յուշկապարիկների երգերի քաղցր եղանակները, որոնք Արշալոյսին խումբ խումբ քոլորւած վիշապանւէր անգրիների շուրջը մեղմ և սրտափրաւ ձայնով մեղեգիներ երգում էին, կենդանիների ուշքըն ու միաքը կենդրոնացնում աւազանի ջրերի կողմը, ուր սովորաբար յայտնուում էր Վիշապամայրը:

Յուշկապարիկների ձայնը ոչ միայն գրաւել էր ուխտա-




որների սիրտը, այլ նոյն իսկ Արալէզներն ու Համբարոնները, Պայերն ու Ծիւաղները մի առ ժամանակ այդ ձայնից դիւթւել, հարբել էին, թողել էին իրենց բներն, մօտեցել էին այրերի, որջերի մուտքերին, լսելու և զննելու արշալոյսին ջրերի մէջ լողացողներին, երգողներին և պարողներին:

Միայն հրէշաղէմ Ալքերը թողել էին լոյսն ու կենդանութիւնը հեռացել էին մօտալուս գալիք արեի ձառագայթներից: Ոչ միայն Ալքերի հակարանքը սաստկանում էր Արեգական սոկեզեղուն ձառագայթների աշխարհ գալուց, ոչ միայն չէին կարող համբերել, որ Լուսի հօր ջերմութիւնը տաքացնէ, բեղմաւորէ, աճեցնէ ու զօրացնէ աշխարհի կենդանութիւնը, այլ նրանք փշաքաղւում և ջղայնացած սրսփում էին, երբ Յուշկապարիկները երգում ու նւագում էին, երբ կենդանութիւնը լսում հրճում և ծիծաղում էր այդ քաղցր նւագներից, եղանակներից և կաքաւումներից: Այն ժամին, երբ քնած ու մե-

ուած կեանքը կենդանտցել ու գւարթացել էր, Ալքերը մը-
տել էին իրենց ստորերկրեայ մութ ջրախորշերը և ծածկ-
ւել էին խաւարի մոայլ քօղով, սպասելով աղջամուղջի
վերադարձին:

Սրբազն աւազանների և լճակների մէջ կանդնած
վիշապական ապառաժեայ արձանները ոչ միայն ծածկոյթ
չունէին, ոչ միայն անոյշ ու վճիտ ջրերի շահմարանների
ափերը բուրջով ու ցանկով չեր պատած, ոչ միայն ուխ-
տառների համար օթևաններ չկային, այլ նոյն իսկ վի-
շապամայրը մեհեան չունէր, նրա պաշտամունքը բաց օ-
դեայ էին կատարում: Աւազանները բոլորւած էին ուղի-



ներով, դալարներով, իսկ հեռուն՝ լեռնալանջերը ծածկ-
ւած էին մշտադալար մայրիներով, որոնք անդրադառնա-
լով լճակների վճիտ ջրերի մէջ սքանչելի տեսարաններ
էին կազմում:

Ուխտառների առաջնթաց խմբակն արդէն վաղ

հասել էր աւազանների ափին, բլրակի մօտ վրանները
բարձրացրել, մատաղների պղնձիկների տակ կրակը վա-
ռել, ծուխն ամպի նման երկինք էր բարձրացրել և սպա-
սում էր կարաւանի հասնելուն: Ուխտառները թէկ ա-
ռաջ էին գնում, բայց միշտ զննում էին լճակի երեսին
սահող մեղմիկ ալիքները սրտատրով սպասելով Վիշապա-
մօր յայտնւելուն:


Ցանկարծակի իշշը ձկան մորթի մէջ, ընկաւ գաճին և
խանունի Անոյշը նը- տ վերադարձան դէպի արևելք, գնա-
կատեց հեռւից երե- հետացան բազմաթիւ վիշապազանց
ւացող յուշկապա- ի մէջ, ծածկւեցին ալիքների տակ:
բիկների խումբը, ո- և մ կանգնած շարունակեցին իրենց
բոնք ինչ որ կառա- որ իսպառ անհետացաւ Վիշապամայ-
ձեկ մի նաւի բոլոր- երով:
ւած գալիս էին լճի
արևելեան կողմից:
Տիկինն իսկոյն չո-
քեց, երեք անգամ
երկրպագեց, սկսեց
զննել արշաւախում-
բը և հրամայեց հե-
տեւորդներին.

Զոքեցէք և ա-
դոթեցէք, մայրը
գալիս է:

Յուշկապարիկնե-
րի խումբը սաւառ-
նում էր ջրերի ա-
լիքների նման, օդալաց կոռուկների նման և արագասան
մօտենում էր լճակի ափին մօտ կուտակւած այն կղզի
ժայռերին, որոնք կանգնած էին ուղղաձիգ, սուր սուր
ծայրերը երկինք ուղղած: Յուշկապարիկների քաղցրանոյշ

մեղեղիների ձայնը աւելի դիւթիչ դարձաւ, երբ նրանք աստիճանաբար մօտեցան ափերին: Սրանց ձայնի ներգործութիւնն այնքան խիստ էր, որ ուխտաւորները զմայլած, նոյն իսկ շնչերը մեղմած, ամբողջ մարմնով ուշը ու միաք դարձրած սրտատրով և հրձւագէմ լսում էին երգերը, զննում էին արտասովոր տեսարանները ապուշ կտրած:

..... առ առ առ առ առ գալիս էր արեկտաւորների համար օթեաններ չկային և ապառաժի շապամայրը մեհեան չունէր, նրա պայան շուշանների նման դեայ էին կատարում: Աւազանները բարձօր սպասին նոյնու ձեռքերին օրհներգ աղանաս կոյսեր բոլոյան վիշապանւէր կղզի բիկների խումբը: Սը փայլը այնպէս թովեց բոլորովին արձանաշոքած դիրքում, սպա-



նիների, նւազողների անգնեց Վիշապամայրը, կուրծքի բացւածքից ուխտաւորներին իր մէջ սաթանման ծամեթից, յուզւած ձայնով, ուեց իր պատդամբը: Քանի մէկ իրար կեաններով, դալարներով, իսկ հեռուն՝ լին ծիրար դէմ չնշէք ու ած Իես Քառասութիւնները, որոնց ոչնչացնէք այն նւիրական արտայայտութիւնները, որոնց մէջ արտացոլում է Վիշապանայրը՝ ձեր կենսատուն: Զեզ քրկութիւն չկայ, քանի որ կեանքն ատում էք, ջրից զըրդիութիւնների դառն քրտիւնքի արդիւնքը: Ալում էք ընկերակիցներիդ դառն քրտիւնքի արդիւնքը:


..... այդ բոպէին մի քանի խումբ ուխտաւորներ ևս հասան Վիշապազանց ճակների ափերին, որոնք նախորդների նման իրենց դիրքերի վրայ չոքեցին գննելու վիշապամօր հեռանալը և անհետանալը: Վիշապամօր ընծայւած կոյսերը իրենց ձեռքերի ծաղիկները սփոնցին ծովի երեսին, կրկին շարան կազմեցին և շարերգով վերադարձան սին, կրկին շարան կազմեցին և շարերգով վերադարձան շուշանանման սպիտակ տաղաւարները, որոնք բարձրացրել էին ուխտաւորների սպասաւորները: Աւխտաւորները ևս ոտքի ելան, շտապեցին, հասան քրմուհիներին և կոյսերին, որոնք շարք շարք կանգնել, երգում էին Վիշապազանց նւիրւած շարական նւազներ:

ուած հաշտւեցէք, սիրեցէք իրար, խաղաղւեցէք, ապա նորին և ողորմութիւն սպասեցէք: Արդար և անարատ եղէք, որ Երկնային անապական կենսարար ջրերին արժանի դառնաք:

Այս խօռքերը շաւարտած արեկ սկաւառակի շուրթը դուրս եկաւ լեռան ետեկից և ձառագայթները ցրւեցան ամեն կողմ: Արեկ ճաճանչների հետ Վիշապամայրը ներս քաշեց գլուխը, թևերը ձկան մորթի մէջ, ընկաւ գաճին և յուշկապարիկների հետ վերադարձան դէպի արեկելք, գնայի գնացին ու անհետացան բազմաթիւ վիշապազանց իրենց իսկ կոյսերը լճափում կանգնած շարունակեցին իրենց մեղեղիները, մինչև որ իսպառ անհետացաւ Վիշապամայրը իր յուշկապարիկներով:

Հենց այդ բոպէին մի քանի խումբ ուխտաւորներ ևս հասան Վիշապազանց ճակների ափերին, որոնք նախորդների նման իրենց դիրքերի վրայ չոքեցին գննելու վիշապամօր հեռանալը և անհետանալը: Վիշապամօր ընծայւած կոյսերը իրենց ձեռքերի ծաղիկները սփոնցին ծովի երեսին, կրկին շարան կազմեցին և շարերգով վերադարձան շուշանանման սպիտակ տաղաւարները, որոնք բարձրացրել էին ուխտաւորների սպասաւորները: Աւխտաւորները ևս ոտքի ելան, շտապեցին, հասան քրմուհիներին և կոյսերին, որոնք շարք շարք կանգնել, երգում էին Վիշապազանց նւիրւած շարական նւազներ:

Կոյսերի և քրմուհիների թափորին ընդառաջեցին Սպանդունիները, որոնք եկել էին գննելու գոհարերւած մատաղացուները, զինելու սպանդները կազմ՝ ու պատրաստ: Սպանդապետը սպիտակ բէհեզներ հագած դուրս եկաւ իր յատուկ տաղաւարից, շրջապատւած սպանդներով և մօտեցաւ զոհի սեղանին: Նախ քրմուհին վերցրեց ճակի անապական ջուրը սրսկսեց սպանդների զլիին,



օրհներգով և մաղթանքով մաքրեց նրանց: Սպանդներն սկսեցին սրել իրենց արոյրէ դանակներն և պատրաստեցին զոհերը կատարելու: Սպանդունիք նախ կապկալեցին ցուլերին և գլորեցին գետին: Սպանդները իրար ետելց կտրեցին ցուլերի վիզերը մինչև ունաշարը: Սպանդապետը իրար ետելց զինեց սեղան բարձրացրած ամեն մի գառ և ուլու Վերջը սպանդապետը վերցրեց նիզակը մօտեցաւ կապկալւած, կաշկանդւած վարապներին և ուժեղ հարւածներով ծակեց նրանց կողերը մինչև սիրտը:

Ամբողջ ժամեր տեսեց այս զոհաբերութիւնը: Իրար ետելց հասած ուխտաւորները ներկայացնում էին քրմապետին, քրմուհիներին և սպանդներին, որոնց մատաղացուները ընդունում, օրհնում և մօտեցնում էին սեղանին կամ սպանդանոցին: Եթե զոհերը կատարւեցան, ջրկիրները իրենց տկերով մեծ եռանդով ջուր կրեցին լճակից և մաքրեցին ինչպէս զոհաբանի վրայ թափւած կարմիր տ-

րիւնը, նոյնպէս սպանդանոցի արիւններն ու փորոտիքները, որոնք իսկոյն հեռացրին, ապրան հորեցին հողի տակ, որ չաղականւի ինչպէս նւիրական ջուրը, նոյնպէս անմահութեան օդը և Ոսկեմօր արգաւանդ հողը:

Այս միջոցին քրմապետը մաքուր ջրով սրակեց Սպանդներին, սպասաւորներին և ուխտաւորներին, երգեցիկ խմբերն առաջ եկան, թմբուկների, ծնծաղների, քնարների, տաւիլների, փողերի և շւիների օժանդակութեամբ, սկսեցին երգել ու փառաբանել Վիշապամօրը, Վիշապահորը, Ոսկեմօրն ու սրանց հարազատներին, որոնք իրենց բիւրաւոր շնորհներով քաղցրացրել էին կեանքը: Վիշապաներ կոյսերը խմբապար բռնած, շարան-շարան բոլորւել մեծ շղթայ էին կազմել երգիչների, գուսանների շուրջը և թռչկոտում էին այնպիսի նազենի շարժումներով, կարծես թէ սաքերը գետնից կտրած օդի մէջ էին պարում: Կոր պարից յետոյ, կանգնում էր խումբը, նւազարաններին աջակցում իրենց երգերով և կաքաւիչներին հրաւէր կարգում կաքաւելու և զւարթացնելու ուխտաւորների բազմութիւնը: Ուրախութիւնն ընդհանուր էր, աօնը ամենից պաշտւած Վիշապազանց. ծեր ու մանուկ, պառաւ, մատաղանաս, զգացմունքով արթած ու ոգկորւած երգում էին: Դաշտի խաշող օդից լեռները բարձրացած և զովերը հասած ուխտաւորները գւարճանում էին անապական հով ու զով բարձունքում հրճում էին:

Արեգակի օրացեալ ժամ Ն Անոյշ իշխանուհին դարձաւ լէպի վրանները և հրաման տեսց սպասաւորներին, որ իսկոյն զոհի համար բերւած ուաելիքն ու զինին տեղափոխեն քրմուհիների մառանները, որտեղից սովորաբար կերակրում ու կշտացնում էին երեք օր և երեք զիշեր ուխտաւորներին:

Սպանդունիները զոհերը կատարելուց, քերթելուց յետոյ, մինչև շամփուրների և խորտիկների պատրաստելը,



Երգեցիկ կոյսերը ձիւնի նման սպիտակ բէհէզները հագեցին, կապոյտ գօտիները մէջքերին, կանաչ երիզները ուսերից խաչք դարձած, գլուխները վարդերով զարդարւած

առաջ եկան նորանոր պարեր սկսելու։ Կոյսերն երկու դասի էին բաժանւած, կապուտ աչւի և ոսկէթէլ մազւրները, որոնք նւիրւած էին Անահիտին, այդ իմաստութեան և հանճարի բաշխողին և սև աչեայ ու գիշերափայլ մազւրները, որոնք ընծայւած էին Վարդեհեր՝ Աստղկան։ Խմբերն իրար գէմ երկու կիսաբոլորակ կազմեցին և ըսկեցին կոր պարը խմբական երգերով և նւագարանների ձայնակցութեամբ։ Նւագածուները իրենց քնարներով, տափիղներով, սանթուրներով, թմբուկներով, ծնծաղներով մօտեցան խմբին և տեղաւորւեցան։

Գուսաններն երգեցիկների, նւագածուների հետ սկսեցին իրենց օրններգը, որոնք գովեցին Վիշապամօր դստեր Վարդեհեր Աստղիկին, որին խսկապէս նւիրւած էր այդ օրը—Վարդերի տօնը։ Պարողուհիներն խկոյն նազանի քայլափոխով սկսան ամբողջ մարմնով շորորալ, նւագի եղանակի բաղիսիւնների համեմատ, որոնց տեսքը, շարժւածքը և թոփչը գրաւեցին ուխտաւորների աչքերն ու սիրտը։

Գուսաններն երգերով պանծացնում էին Աստղկան սէրն ու գորովը, պատկերն ու տեսքը, եռանդն ու աշխայժը, որոնցով մարդիկ ոգի ու գգացում ստացած ուրախ կեանք էին վարում։ Այս զգացման շնորհիւ մարդիկ երկերը գրախափ էին վերածել, սիրոյ բոցերով իրար գըրկել ու գգւել, երջանկութեան վարդաստան էին թևակոխել հրձւալի ու բերկըրալի օրեր անցնելու։ Առանց Աստղկան առատաբար բաշխած սիրոյ և զգացումների, կեանքը տիսուր և անտանելի էին գտնում, առանց նորա շնորհած վայելքներին, մոայլ ու խաւար պիտի դառնային բնութեան բոլոր տեսարանները։ Ինչպէս Աստղիկն էր բաշխում կենդանի ու վառ աչքերը, նոյնպէս Աստղկան շընորհն էին համարում վարդագոյն այտերը, փղոսկրեայ կղակները, շամամ ծծերը, նոճանման հասակը, կամար

ունքերը, փայլուն ճակատը, բաբախող սրտերը, ցնցող ջերը և գողգողացնող մկանները:

Երգչուհիների միւս մառը, իրենց գուսաններով և կաքաւիչներով իրենց հերթին սկսեցին երգել Սնահիտի հանձարը, նրա հնարագիտութիւնները, մարդկութեան տւած շնորհները, գեղեցիկ արւեստները, որոնցով մարդը դրախտի է վերածել անապատը, զարգարել է բիւր բարիքով և գոյնզգոյն ծաղիկներով ձորերն ու լեռնալանջերը, նոյն իսկ ապառաժի քարքարու կողերը: Որը գովում էր մուրճն ու կռանը, որը ներբողում կացին ու սղոցը, որը ուշք էր գարճնել տալիս կառքին ու սայլին, որը գովասանում արօրն ու խոփը, ձիու սահճն ու պայտը, նետն ու աղեղը, սանդերքն ու մաքուքը, նկարն ու արձանը, տաւիդն ու շւին, մի խօսքով այն բոլոր արւեստներն ու գործիքները, որոնք մարդը ձեռք էր բերել Սնահիտի շնորհած հնարամիա իմաստութիւնով:

Ամեն անգամ գուսանները մի տուն երգելուց յետոյ, նոյնը կրկնում էին պարողուհիները և ոգեսրւած ետ ու առաջ տարուբերւում, ծածանուում էին իրար թևանցուկ, ոգեսրութեամբ գեղւած: Մեզմ զեփիւոր շոյում էր ոգեսրում էր երիտասարգութեան ալ ու վարդավառ դէմքերը, մազերն ու կրծքերը, արեի պայծառ ճառագայթների տակ ցոլացնում էր նրանց հրացայտ աչքերը, ոսկեփայլ մազերը և ողորկ մորթերը:

Աստղիկի պաշտամունքի երկապագուները բնագին էին ստրկացած և քարոզում էին հետեւ զգացումներին, իսկ Սնահիտի սպասուհիները առողջ դատողութեանը բնազդից նախադասութիւն էին տալիս: Սնահիտը Վիշապահօր մարմնացած հանձարն էր, Աստղիկը Ոսկեմօր զգացումների կենզանացած տիպարն:

Այս մըցումները և տեսարանները այնքան հրապաւը էին որաւիչ էին, որ եօթն օրւան ճանապարհ էին

կարում հազարաւոր ուխտաւորներ, շտապում էին, բարձրանում վիշապազանց լեռնադաշտը, շրջապատում էին Ջրաբաշխի և կենսաբաշխի անզրիները և նրանց սպասին ընծայւած գուսանների, երգչուհիների և կաքաւիչների ուրախութիւններին հանդիսատես լինելու և հրձւանքին մասնակցելու:

Մինչ ուխտաւորները բոլորւել, հիացած զննում ու լուսում էին վիշապանւէր կոյսերին, զբաղւած էին նրանց պարերգով, ճառագայթեալ ժամին մատակարաններն առաջ եկան և ձողիկների վրայ շամփրած խորովածներ բաժանեցին ինչպէս հանդիսագիրներին, նոյնպէս և ուխտաւորներին: Մրանց հետեւցին սկսուածներով և տեփուրներով կարագ, խորիսի բաղարջ, կարկանդակ և գինի – օշարակ բաժանողները: Ոտքի վրայ կատարւած այս նախաճաշքը երբէք արգելը չէր պարերի և նւազների անխափան շարունակութեան, ընդհակառակը, այդ նախաճաշով գորացած, աւելի ոգեսրութեամբ էին երգում, թոշկոտում և զմայեցնում ուխտաւորներին:

Շառաւիղեալ ժամին մատադն արդէն պատրաստ էր: Սպասաւորները բաժանեցին հանդիսականներին լօշի մէջ վաթաթւած թերխաշ մատաղի միս: Յանկացողները իրենց պատառները թաց էին անսւմ քարզաններով զրւած մատաղի աղաջրում: Մաքուր լեռնային օղում, ոնմահական տափանների ափին ժողովուրդն ուտում էր, խմում էր լճակների սառն ջուրը, իսկոյն մարսում և զարձեալ քաղցում: Բայց այնքան մեծ էր զոհւած արջառների, ոչխարների, ուլերի թիւը, որ անխնայաբար բաժանում էին և կշացնում բոլորին:

Դեռ մատաղը չվերջացրած վարդեհեր Աստղիկան նվիրւած քառասուն ծիրանազգեստ կոյսեր, ուսերին սրփուած իրենց սաթանման մազերը, գլխները վարդերով պրակած, մերկ վղերն ու դաստակները ժանգառ ապակ

ուլունգների շարաններով զարդարած, նապաճեմ իջան բարձունքից, մօտեցան նւագածուներին և սկսեցին իրենց երգն ու պարը։ Գուսանները սրանց բոլորած կը կնեցին



Վարդեհերին նսիրւած բազմաթիւ տագեր։ Երբ ոգևորւած փոխընդփոխ շարունակում էին պարը, կաքաւը, արեն արդէն երկնակամարի ամենից բարձունքում էր տեղ բըռնած և օդը աստիճանաբար այնքան էր խստացել, որ մարդարտափայլ քրտնաշարով ծածկել էր գուսանների և կաքաւիչների ճակատները։

Այս միջոցին խումբ կոյսեր ու պատանիներ մի մի սափոր ու փարչ վերցրին ու սկսեցին սրսկել իրենց սիրելիների վրայ ու նրանց զովացնել, հովացնել։ Անվերջ ջուր էին սրսկում իրար վրայ, աղաղակում, աղմղկում, փախչում, բայց ջրւելուց ոչ ոք չէր կարողանում գլուխն ազատել։ Վարդեհերն է, — գոռում էին ու անխնայ սրսկում զով ջուրը ոտքից գլուխ։ Երգիչները, կաքաւիչները, նւագածուները և ժողովուրդը առանց դիրքերը փոփոխելու շարունակեցին իրենց ուրախութիւնը մինչև հագուստների արևի ճառագայթների տակ չորանալը։ Դեռաստիներն ու պատանիները անվերջ ջուր էին կրում ու ածում ուխտաւորների զլիխն, որոնք թուլացել կամ մտքերի մէջ սուզւել, մի կողմն էին քաշւել։

— Այսօր Վարդեհերի տօնն է, խննդալու և պարելու օր է, գոռում էին ջուր սրսկողները, թռչկոտում և ցատկում։ Այսօր մեր հովանաւորի տօնն է, վարդավառ է, պէտք է միայն երգել, պարել ու ծիծաղել, ոչ թէ թըմրել ու նիհրել։

— Երանի՛ թէ այդ ջուրը երկնքից մաղւէր, հառաչելով պատասխանում էին ծերերն ու հասակաւորները, մենք էլ հոգով հրճւէինք։

Դեռահասներն այնքան ջրեցին ու թրջեցին ուխտաւորին, որ թռչւելուց ասատւելու համար, բոլորն էլ գնացին մտան պարողների շրջանն ու սկսեցին նրանց հետ երգել ու ցատկուել։ Պարը տեսց մինչև արևի մայր մտնելը, թէև յետինքին ուխտաւորները բազմեցան դա-

լարի Շքայ ճաշելու, բայց չը դադարեց երգն ու նւազը, պարն ու կաքաւը։ Արևմտի ողբը նւագելուց յետոյ, մեծամեծ կրակներ ջեռուցին ուխտաւորները իրենց վրանների մօտ, որոնց բոլորած մինչև կես գիշեր երգեցին, նւագեցին և լսեցին զուսանների պատմութիւնները, որոնք պապերից լսածները աւանդում էին թոռներին։

Յետին ժամին ամեն մի սիրահար դտաւ իր սիրեկանին, թաղիքները տարածեցին գետին, ծաղկուն կարպետները վրաններն առին, ծածկեցին ու ընկան քնեցան։ Պահապանները կրակները գոլխրցուցին ու բորբոքեցին մինչև առաւօտ, մինչև Վարդամատի և Լուսոյ-հօր այցը, երբ ամենքն սիթափւած, դիմեցին լճի ափ Վիշապամօք այցին արժանանալու։ Բայց երեք առաւօտ Վիշապամայրն էլ չացելեց ուխտաւորներին։ Ամեն օր զոհեր կատարեցան, զուսաններն երգեցին, կոյսերը, պատանիները կաքաւեցին ու պարեցին և դրւագեցին ինչպէս Վիշապամօքը, նոյնպէս և Վարդեհեր Աստղիկին ու Անահիտին։ Երեք օր, երեք գիշեր կեր ու խումը շարունակեց, խնդացին ու հրձւեցին ու օրհնեցին, ոչ շրթունքներն ու կոկորդը դադարեցան, ոչ սրունքներն ու ոտքերը յոդնեցան, ոչ էլ քնարներն ու տաւիլները լուեցին։

Բայց մի մոայլ միտք յաճախ պատում էր ծերուկներին ու պառաւներին։ Անընդհատ զննում էին լեռների կատարները, երկնքի բարձունքը, ոչ մի սպիտակ ամպ, ոչ մի կաթիլ անձրկ, ոչ էլ մասախուղ, ջինջ էր երկինքը, պարզ էր լուսնկան և պայծառ արեգակը։ Իսկ դաշտերում առանց ջրի ու թոնի մնացած բերքն ու այգեստանը ջրի կարօս չորանում ու գեղնում էին, սպառնալով սովորանել Ուրարտա աշխարհին ամբողջ ձմեռը։ Դեռատիների երգն ու ծիծաղը, նւազն ու կաքաւը չէին կարողանում ցըել չափահանների այս տխուր մտքերը։

Առիթից օդուելով Անահիտի պաշտամունքի քրմա-

ովետունին, երբորդ իրիկունը իր երգչունիների, կաքաւիչների և գուսանների խմբով բարձրացաւ ամբիոն, շըրջապատւած ժողովրդի մեծ բազմութեամբ և խօսեց շարադրած դիւցազներգութիւնը, որով յուզեց ու մրրկեց ուխտաւորների սիրալու։ Նա սկսեց մի այնպիսի բնաբանով, որ բոլորի ուշըն ու միտքը կենարոնացընեց դէպի իր նւազները։ Նա իր խրոխտ ճառովը, գեղեցիկ դարձւածներով և համոզիչ փաստերով ստիպեց ուխտաւորներին անվերջ իր արծարծած խնդրով զբաղւելու և մտածելու միմիայն այդ հարցի մասին։

«Խոլամիտ մարդիկ, ես Վիշապահայրս

Ամպերն եմ կազել, անձրկ չեմ շաղ տալ.

Միթէ դուք անջուր կլչորցնէք ձեր հանդը.

Եթէ երկնքից անձրկ չստանաք»։

Ամեն մի ընդհատումի այս քառեակը երգում էին գուսանները և քրմապետունին ազատ շունչ տոնելուց յետոյ, երբ հանգստանում էր, նորից սկսում էր իր ընդհատւած ճառը։ «Դուք, ասում էր քրմապետունին, Վիշապահօր պատկերն էք, նրա հոգին ձեր կրծքումն է բնակրած, միթէ նրա ուղեղի հիւէներից ձեր գանկերում չեն տարածւած, որ դուք էլ խորհիք և ձեր կեանքը չը մատնէք պատահականութիւնների։ Վիշապամայրը ձեզ շնորհել է լճակներ, ծովակներ և գետեր, դուք էլ հնար գտէք և ջուրն ուղեցէք դէպի ձեր այգեստանները։ Վիշապահայրը ձեզ առատ անձրկ ու ձիւն է տալիս, դուք էլ մտածեցէք այդ շնորհից այնպէս օգտւել, որ կարողանաք կեանքը զարդարել և ազնւացնել։ Միայն այն ժամանակ ձեզ վրայ հաշտ աչքով կը նայէ Վիշապահայրը, երբ դուք ձեր անապահները դրախտի վերածելու համար ջրանցքներ կը շինէք, քանքաններ կը փորէք և աւագուաներն ու կաւուաները ջրելով կենդանութիւնը կընդարձակէք, ամայութիւնը կը շէնացնէք։

«Մինչև որ Գեղամայ լճից ջրանցք չփորէք և ջուրը չտանէք դէպի դաշտ, արապարներն ու անապատները դրախտի չվերածէք, երբէք չէք ապահովել ձեր կեանքը՝ իսկ ապահովելով ձեր կեանքը, ընդարձակելով պարտէզները, այգիներն ու անտառները, պիտի գօրացնէք կենդանութիւնը, պիտի ընդարձակէք վիշապահօր իշխանութիւնը. դուք պիտի աջակից և աշխատակից դառնաք նրա ցանկութիւնների կատարման:

«Զեր պապերը հարիւր տարի առաջ վիշապազանց աւազանների ջրանցքները շինեցին, ամբարտակները կառուցին, աշխարհն ուրախացուցին, միթէ դուք այդ պապերի զաւակները չէք: «Եթէ ամբողջ գեղն ոտքի կանգնի, գերան կը կուրի»: Աղա եթէ ամբողջ դաշտը փետատ վերցնի, ինչի սարը չպիտի ծակէ ու ջուրը չպիտի տանի դաշտի բամբակն ու այգին ջրելու:

«Խալդի զաւակներ, Խալդի որդիներ, դուք որ կտրել էք վիշապազանց լեռների լանջերն ու ջուրը դաշտ հասցնելու համար եօթանասուն փարսախ առու էք տարել, եթէ միաբանիք և վճռէք, մենք ձեզ առաջնորդելով Գեղամայ լճակի ջուրը դաշտ կհասցնենք, մինչև Արմավիրի սահմանները:

«Եթէ սիրում էք երջանիկ և բարեբաղդ կեանքը, եթէ տենջում էք դրախտում ապրել, եթէ ձգտում էք առաջ գնալ, այսօր ուխտաւորներդ ուխտեցէք, անմիջապէս գործի ձեռնամուխ լինել և ջրանցքը բանալ: Վիշապամայքը այնպիսի անոյշ ու առատ ջուր է մատակարարել Գեղամի ծովին, այնքան անսպառ են նրա աղբիւրներն ու վտակները, որ այդ առակի ջրով կարող էք ոռոգել ու յագեցնել ամբողջ Ուրարտի լեռնադաշտը»:

Յոլակ իշխանը բարձրացաւ իր տեղից և մօտենալով քրմապետունուն ասաց.

— Ես ուխտ եմ զնում և խօսք եմ տալիս վիշապա-

զանց բարձունքում, որ ամբողջ գիւղիս ժողովրդով երեք հազար բանւորով, մեր փետատով ու բահով իննառւնը մի որ ամեն տարի աշխատենք այդ սուրբք գործի համար և անմահական անաբական ջուրը տանենք հասցնենք դաշտ:

Յոլակ իշխանին հետեւեցին միւս գիւղատէրները, տիկիններն ու օրիորդները և տմենքը սիրով յանձն առին երեք տարի տշխատել և առուն փորել: Այս ուխտի վրայ սկսեցին գոհաբանական երգեր երգել, անոյշ գինին խմեցին և վճիռն հաստատեցին: Անահիախին ընծայւած կոյսերն սկսեցին իրենց վարդ պարը, ժողովրդի ուխտաւորների հետ խառն, թռան ու թռչկուտեցան, երգեցին ու զւարթացան մինչև յետին ժամերն և ընկան զոյգ-զոյգ և մրափեցին:

Չորրորդ առաւօտը դեռ չբացւած ամբողջ երկները ծածկւեց մռայլ ամպերով, ոչ միայն վիշապազանց բարձունքը, այլ նոյն իսկ դաշտի շրջակայ բոլոր լեռները մինչև Բարդոդ, — Սուկաւետ, Արագած ու Զարիշատ մըթնագնել էր երկինքը: Թէկ մէգն ու մառախուղը պատել էր ուխտաւորներին, անձրել սպառնում էր նրանց թըռչել ու տղիել, բայց ցնծութեան չափն ու սահմանը աւելի ոգևորիչ էր, քանի որ Վիշապամայը հաշուել էր ժողովրդի հետ, վիշապահայը ամպերը մղել էր զէպի դաշտերը և շուտով ոռոգելու, վերակենդանացնելու էր բոյմն ու բարին, անսառնն ու կենգանին: Լուսաբացին երկու ժամ մնացած սկսեց յորդ անձրել տեղալ ոչ միայն Ուրարտայի դաշտում, այլև Շիրակում և շրջակայ բոլոր սարահարթերում: Երեք ժամ այնքան անձրել տեղաց, որ ամբողջ երկիր բուսականութիւնը թարմացաւ, դեղնած ծառերը դալարեցան, պտուղները ուռնացան, խուտերը գւարթացան, բանջարները տողեցան և անսառնների ճարակը հրապուրիչ և մննդալի դարձաւ:



Ուրախութեան չափ ու սահման չը կար:


Ամեն բերան օրհնութիւն էր կարգում, ամենքն էլ ցնծում էին և աղօթք մրմնջում Վիշապամօրն ու Վիշապահօրն, որ աշխարհ լքցրել էին բիւր բարով։ Լոյսի հետ միասին նոր կեանք, նոր կենդանութիւն էր աշխարհ եկել և մարդու ճակատի մոայլ կնճիռները ցրւել ու անհետացրել։ Հրձւանքն հասել էր զագաթնակէտին, երբ առաւոտ արեի ճառագայթները պատառեցին ամպերն և ի-

բենց սոկեզեղուն փայլով աշխարհը խնդացրին։ Ծիրանի գոակին պատահ երկրի վրայ եօթը գոյնով, եօթանասուն եօթը տեսակ ցնծութիւն և ուրախութիւն աշխարհ բերելով։ Ամեն ըլթունք, ամեն բերան միենոյն խօսքերն էին կրկնում։

Աշխարհը լիացաւ, կեանքը վերածնաւ, Անոյշ մայրըն հաշտւեց ժողովրդի հետ։

Վիշապազանց քրմուհիները պատզամ բերին ժողովրդին, թէ Վիշապամայրը ընդունել է նրանց զոհերը, հաշտւել է այն ժողովրդի հետ, որն ուխտել է անմիջապէս դործի ձեւնամուխ լինել և Գեղամայ ծովի ափերից առու տանելու դէպի Արմաւիր։ Ամեն մարդ ոգեսրւած այդ աւետիսից, նորից ու նորից կրկնեց իր ուխտը և խոստացան անհնարինը հնարաւոր դարձնել և անմահական ջուրը դաշտ իջեցնել։

«Վիշապահայրը հրամայել է Վիշապառիւծին հալածել Վիշապաքաղին, երկնային ողորմութեան գոները բաց թողնել, որ մարդը վրկւի յաւիտենական կորստից, երկիրն ազատւի անապատանալուց», ասում էր քրմապետի մունետիկը ման դալով ժողովրդի մէջ։



Բ. Կ Ե Ն Ա Մ Գ Ր Ա Կ Ա Ն

1. Թոշնիկ Տարբազ 1895 թ. № 33.
2. Տ. Զուհաջեան » 1898 թ. № 21
3. Կարս-Մուրգաս
Վերածնութիւն Զ. Հայր. 1902 թ. № 130
4. ԿՈՄՊՈԶԻՏՈՐ Դեղունի 1902 թ. № 5—6
5. ՈԳԵԿՈՐՈՒԹԻՒՆ Աղբիլը 1902 թ. № 6
6. Մուրագ Եր. Հ. 1903 թ. № 25—36
7. Նիզամի-Սալիխանէ Ալեքսանդրապոլ 1906 թ.
8. Գծեր Հայրիկի կեանքից Խաթար. 1908 № 36
9. Սաթթար-Խան Ախուրեան 1908 № 69—80
10. Իգմիրլեան, Երկաթէ Մարգը Սուրբ. 1910 թ.
11. Շիրվանզադէ XXX տմեալ յոբել. 1911 թ.
12. Մամեդ-Ալի Խանъ Александ. 1909 թ.
13. Ռախիմ Խանъ 1909 թա. «Баку» 214—242
14. Բաբъ և Բехա Տիգֆաւս 1910 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0322850

27226